Արշակ Չոպանյան

Սիրո ճիչ

Օ՜հ, կայծակը, որ ամպերեն
Ջիկզակելով կպլանա
Եվ որ, հսկա օձն հրեղեն,
Կաղնիներուն կսպառնա,
Կրնա՞ հանկարծ այրեին մեջ
Կասիլ, մնալ առկախյալ,
Կամ խոլ վազքին իր տալով վերջ՝
Կրնա՞ երկինքը դառնալ…
Եվ սա հեղեղն ամեհի,
Որ դաշտերը կ’ողողե,
Որ ժայռերուն դեմ կկռվի,
Ընդերքն հողին կպեղե,
Կրրնա՞ միթե, փրրփրադեզ
Ահեղ սողունն այդ հեղուկ,
Կրրնա սանձել արծաթագես
Իր կոհակներն հեղհեղուկ…
Իմ սրտիս մեջ ալ ինկավ շանթ,
Հեղեղք հոգիս ողողեցին.
Մնա՜ք բարով, խինդ, հույս ու խանդ,
Ջիս դրժոխքին մեջ թաղեցին…